ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ԱՐՍԵՆ ՔԱՐԱՄՅԱՆԻ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը՝** Արսեն Ռոբերտի Քարամյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝** Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝** Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա, 2017 թ. հոկտեմբերի 11-13-ը

4. **Հրավիրող կողմը՝** Ռուսաստանի Դաշնության կրթության և գիտության նախարարություն, Երիտասարդության հարցերի դաշնային գործակալություն

5. **Գործուղման նպատակը՝** Մասնակցություն երիտասարդական քաղաքականության իրականացման պետական լիազոր մարմինների ղեկավարների միջազգային նախարարական հանդիպմանը

6. **Քննարկված թեմաները**

Մասնակից երկրների կողմից պետական երիտասարդական քաղաքականության գերակա ուղղությունների պանելային ներկայացում և քննարկում հետևյալ ոլորտների սահմաններում՝

- **Կրթություն և գիտություն**
- **Էկոլոգիա և առողջապահություն**
- **Միջազգային անվտանգություն**

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը**

Պանելային քննարկման ժամանակ ներկայացվել է «Տարածաշրջանային անվտանգության մարտահրավերները երիտասարդների համար. հայաստանյան մոտեցում» վերնագրով ելույթը: Հայաստանի Հանրապետության կողմից երիտասարդների հիմնախնդիրների շարքում կարևորվել է նրանց անվտանգությունը, ինչպես նաև իրենց ապագայի համար ներդրումներ անելու և իրենց երկրի զարգացման համար կայուն հիմքեր ստեղծելու հնարավորությունը: Նշվել է, որ միջազգային և տարածաշրջանային անվտանգությունը կարևոր է յուրաքանչյուր երիտասարդի ինքնադրսևորման, սոցիալական և տնտեսական ներգրավման համար: Անվտանգ շրջակա միջավայրը երիտասարդների համար հիմնական երաշխիքն է՝ գործելու և զարգանալու ու իրենց երկրի ապագան կերտելու համար: Մասնավորապես հնչեցվել է, որ Հայաստանի Հանրապետությունը ավանդաբար ջանք չի խնայում

Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը խաղաղ միջոցներով լուծելու համար, որը կապահովի անվտանգ միջավայր տարածաշրջանի բոլոր երիտասարդների ինքնահիրացման համար: Իսկ դրա լուծումն անմիջականորեն հենված է երկխոսության և փոխզիջման վրա, ինչը չի կարող ենթադրել ավելի ցածր կարգավիճակ, քան Արցախի Հանրապետության ներկա կարգավիճակն է:

Տեղի է ունեցել նաև ճանաչողական այցելություն գիտության և ինովացիայի «Սոլկովո» կենտրոն, որտեղ ուսումնասիրվել են կենտրոնի ձեռքբերումները և հնարավորությունները, քննարկվել են հետագա համագործակցության հեռանկարները:

Հանդիպման վերջին օրը Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը մասնակցել է Երիտասարդության և ուսանողության XIX փառատոնի բացման շքահանդեսին:

Տեղի է ունեցել նաև աշխատանքային հանդիպում Բելառուսի Հանրապետության կրթության նախարար Իգոր Կարպենկոյի հետ: Քննարկվել են երիտասարդության ոլորտում հետագա համագործակցության հարցերը: Կողմերը ցանկություն են հայտնել միավորելու ջանքերը երիտասարդների կրթական, մշակութային փոխանակման ծրագրերի ոլորտում:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Բելառուսի Հանրապետության կրթության նախարարի կողմից հնչեցված հրավերի հիման վրա ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ 2019 թվականի հունվար-փետրվար ամիսներին այցելել Մինսկ՝ երիտասարդական համագործակցության ոլորտում կնքված հուշագրի սահմաններում միջոցառումների պլանը քննարկելու և հաստատելու համար:

9. Գործուղվողը՝ Արսեն Ռոբերտի Քարամյան

Ստորագրությունը, ամսաթիվը

Արսեն Ռոբերտի Քարամյան

17.10.2017 թ.